խաչակնքեց երեսին, իսկ մթագին մտքերն չէին թողնում նէրան։ Աննկատելի կերպով այդ մտքերը անցան եղբօրը… վերջին ժամանակները նա սկսել է շատ խըմել օղի, իսկ ո՞ր տեղից վերցնել փող հարբեցողութեան համար։ Հը՛, կը թալանի վաճառականին, իսկ նրա մօտ փող շատ կայ։ Նէ տեսնում էր, ի՛նչպէս նա համարում էր փողերը, ուղիղ է, և եղբայրը տեսաւ։ Բայց ինչո՞ւ էր վաճառականը իր փողերը համարում։ Չէ՞ որ դա գայթակղեցնում է թոյլ կամքի տէր մարդուն, փորձում էր Մարիան։ Յիրաւի ոչ, յանկարծ մտաբերեց Նէ, Իւանը հարբեցող է՛, երբ սթափուել ուզենայ, նա ամեն բանի կը գնայ, սակայն նա վախկոտ է… Վաճառականը կ'ասի, ո՛վ է նրան կողոպտել, այն ժամանակ Իւանին է՛լ ազատուելիք չ'կայ Սիբիրից, իսկ դրանից նա կրակից է՛լ առաւել է վախենում…

Մի ժամից աւել էր անցել, իսկ Իւանը դեռ չէր վերադարձել։ Յանկարծ Մարիան լսում է նախասենեակում ինչ—որ թխթխկոց։ Նէ արագութեամբ դուքանից վեր կացաւ և լայն բացեց դուռը։ Յարդեայ կտուրի արանքներից թափանցած առաւօտեայ լուսաբացը հնարաւորութիւն տուեց նէրան տեսնելու, ի՛նչ է կատարւում նախասենեակում։ Իւանը կացնով բարձրացընում էր գերանը, որը ընկած էր անկիւնում, և այնպէս էր զբաղուած իր գործով, որ մինչև անգամ չը նկատեց քրոջը։ Երբ գերանը բարձրացաւ, նա կոխեց նրա տակ մի ինչ—որ բան և նորից գերանը իր առաջուայ տեղը վար դրեց։

— Ի՞նչ ես այստեղ անում, ձայն տուեց նրան Մարիան։

— Կորի՛ր, քանի անփաս ես, պատասխանեց նա։

— Ո՛հ բարի բան չի՛ գուշակում իմ սիրտը, — ասաց Մարիան և մօտեցաւ եղբօրը։ — Ո՞ւր ես թողել դու վաճառականին, հարցրեց նէ։

— Գնա՛ց, — պատասխանեց Իւանը։

— Ասա՛ ինձ ուղիղը, թէ չէ կը սկսեմ պոռալ, կը զարթեցնեմ, ոտքի կը կանգնեցնեմ հասարակութիւնը։ Խոստովանի՛ր, խելակորոյս արտասանեց Մարիան և բռնեց եղբօր ձեռքը։

Իւանը մի սաստիկ շարժումով հեռունետեց քրոջը։

Մօտակայ գիւղում զանգակները հնչեցին առաւօտեայ ժամերգութեան համար, այդ զօղանչիւնը սթափեցրեց Իւանին… Նա դողաց և ձեռքից վար գցեց կացինը։

— Ի՞նչ ես արել վաճառականի հետ, — կպում էր Մարիան, — զզջա՛, չարագո՛րծ։

— Սպանեցի՛… կամաց արտասանեց նա։

Մարիան թոյլ կերպով ճչաց ու փռւեց յատակին։

Թրգմ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԷԿ-ՅՈՎՍ.

Շարայարելի

ԳԱՂՏՆԻՔ ՎԵՆԵՏԿՈՅ

Ա

ԾՈՎՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Քիչ ատենէն պալատականք ժողովեցան Պուչինդորոյի վրայ, որուն համակ ոսկեզօծ կողերն արեւուն դէմ կը ցոլացընէին նաւուն ողնափայտին վրայ դրուագներն, արաբական քանդակները, յուշկապարիկները և մօտացածին կենդանիները, որոնցմով Վենետիկեան արուեստին երեւակայութիւնը զարդարած էր նաւը։ Պուչինդորոյ, ինչպէս վերը ըսինք, հսկայաձև տարօրինակ նաւ մ'էր, և մի միայն այս հանդէսին կը ծառայէր։

Ադրիականին այս հսկայ նաւը դար մ'է գրեթէ որ Վենետկոյ նաւարանին մէջ կը քնանայ իր յետին քունը։ Այս տողերը գրողն տասնըհինգ տարի առաջ (1866) տեսած է զայն, անյայտացող պետութեան մը աւերակն, աւստրիական գինուորներուն հսկողութեան ներքև։ Այսօր, ինչ որ կը մնայ Պուչինտորոյէն իտալիոյ պահպանութեան յանձնուած է։ Սակայն Պերճափայլ Հասարակապետութիւնը կը հանգչի առ յաւէտ լճակին խորը, ուր օր մը Վենետիկն ալ պիտի խորասուզի։

digitised by A.R.A.R.@

Պույինքրորոյի ետեւէն կու գային հազարաւոր կոնտրաներ, որոնց Հասարակապետութեան ծախուց կարգադիր օրէնքն այն տիսուր միաձեւութիւնը յատկացուցած էր, որ նոյն իսկ վենետկոյ Պետութեան իյնալէն յետոյ ալ պահուցաւ. և օտարքանի մը, առաջին անգամ վենետիկ մտնելուն, զարմանքը շարժող առարկաներէն մին է։ Այս համակ սեագոյն և առանց ո՛ և է զարդարանքի նաւակախումբին մէջ փառահեղ և հսկայ Պույինդորոն կը տեսնուէր իբր հիւաղ ոգի մը՝ շուրջը պատած հոգապաներու և ահազնատեսիլ ջղջիկներու վոհմակէն։

Հանդիսական ճամբայ ելած էին, անցան Լիտոն և կտրեցին խրուտը. միշտ կը յառաջանային։ Նաւակախումբը կը մոտենար Պրէնդային բերանը, և կը տեսնուէին հեռուէն քիոճիցի ձկնորսաց հիւղակները, երբ տոժը ձեռքը բարձրացուցնելով կանգ առնելու նշանը տուաւ։

Նաւապետին սուլելուն՝ թիավարաց երկու նստարաններն իրենց ոսկեղօծ թիերը հանեցին ջրէն. Պույինդորոյ շարունակեց քանի մը վայրկեան ևս իր ճամբան և ապա անշարժ կեցաւ։ Այն ատեն տոժը ամպհովանիով աթոռի մը վրայ ելաւ, որ իրեն յատկացուած էր նաւուն կռնակի բարձրաւանդակին վրայ, և հոնկից երկար ճառախօսութիւն մը ըրաւ, որուն բնականապէս ամբողջ նիւթն էր վենետկոյ փառքը։ Թէպէտ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի գրեթէ եօթանասուն տարուան էր, այլ հաստատուն և կորովի ձայնով մը կը խօսէր։ Սակայն այս բուռն, աղմկայոյզ, շաղակրատ ժողովրդեան մէջ կարելի չէր լռութիւնը երկար ատեն պահել։ Ուստի տոժին խօսքերը գրեթէ միայն Պույինդորոյի մէջ ազնուական նաւորդներուն լսելի եղան, որոնք գէթ կ՚ունկնդրէին կամ կ՚ենթարկային ունկնդրել յարգական լռութեան մը մէջ։ Ուրիշ ամէն կողմ զուարթ ժխոր մը կը տիրէր, որուն մէջ անկարելի էր իրարու խօսքը հասկընալ։ Ամէն ոք կռնտոլներուն վրայ կանգնած՝ դիմացի կամ իրեն մօտ եղողներուն հետ իտալական յատուկ շաղակրատութեամբ և աշխուժութեամբ խօսքեր կը փոխանակէր։ Այս մօտ եղողները զիրար կ՚արգիլէին, ոչ թէ լսելու, որուն ոչ ոք գուցէ փոյթ ունէր, այլ տեսնելու, որ ամենէն կարևորագոյնը կը թուէր։

Ցիրուցիր նաւակներուն վրայ նկարչօրէն թաղած քանի մը հազար մարդոց մի միայն փափագն էր տեսնել տոժին Աղրիականին հետ պսակուելուն հանդէսը, այսինքն իր ոսկէջ մատանին ծովուն մէջ ձգելը։ Վենետկոյ աղքատ դասակարգին աւելորդապաշտական երևակայութիւնը չենք գիտեր ի՞նչ գաղտնի իմաստներ կը վերագրէր այս անսովոր արարողութեան ներկայացուցած խորհրդաւոր նշանին։ Ամենափոքր հանդիպած միջադէպէ մը գուշակութիւններ կը հանէր։ Այ ինչ դիպուած մը ջերմեռանդօրէն կը դիտուէր, կամ կը մեկնուէր ապա կոնտոլավարներուն կողմանէ Ադրիատիկոնի քարափին սալաքարերուն վրայ ապրեւոն մէջ տարածուած, կամ ձկնորսներէն՝ լճակին միւս կողմը իրենց ուղղանները նետած ատեն։ Ամէն ինչ իմաստ մ՚ունէր և գուշակութեան մը ծառայէր։ Թէ որ մատանին տոժին մատէն դժուարաւ ելլէր, անախալ նշան մ՚էր Հասարապետութեան ներքին վարչութեան ծանր տագնապներուն. թէ որ իյնալու ատեն օդին մէջ ինքն իր վրայ պտոյտ ընէր, խեղճութիւն և սով կը սպառնար աղքատ ժողովրդեան. եթէ իյնալու ատեն ջուրը վեր ցատքեցնէր, Սարակինոսաց հետ պատերազմ կը նշանակէր. բայց թէ որ իյնար ծովուն մէջ առանց անոր երեսը խորվելու, վենետիկը կրնար ապահով ըլլալ բարգաւաճ և ամենառատ տարի մը բոլորելու։

Ինչպէս կը տեսնուի՝ չար գուշակութիւնք շատ աւելի բազմաթիւ էին բարի գուշակութիւններէ, սակայն այս բանս արգելք չեղաւ Վենետկոյ հնգետասաններորդ դարուն Եւրոպայի ամենէն զօրաւոր և ամենէն հարուստ պետութիւնն ըլլալու։

Ֆրանչէսքոյ Ֆոսքարի իւր ճառը աւարտելով, երկու քայլ առաջ եկաւ նաւուն

digitised by A.R.A.R.@

պակին մօտ և պատրաստուեցաւ մատա-նին ծովը ձգելու գործին։ Ցոժը ծերունի մ'էր, մօտ հօթանասուն տարեոյ, ինչպէս վերը ըսինք, իւր ձեռքերն այլ ևս դիւրա-շարժ չէին, մանաւանդ որ ատենօք ռումբի կոտոր մը ձախ ուսը հարուածելով, այն կողմը գրեթէ բոլորովին անդամալոյծ ըրած էր, անոր համար դքսական մատա-նին՝ զոր աջ ձեռքին մատնեմատին ան-ցուցած էր, դժուարաւ կը սահէր ձախ ձեռքին մատերուն մէջ։ Ցոժը ժողովուր-դեան նախապաշարմունքները լաւ գիտէր, կը նեղասրտէր, իր ճակատը կը կարմըր-նար։ Երկար տրտունջ մը սկսաւ բար-ձրանալ բոլոր կոնտոլաներէն։

— Ինչպիսի՜ ահաւոր դժբախտութիւնք կը սպառնան Վենետկոյ. կարծես կ'ըսէին տազնապեալ կերպարանքները։

Սակայն Ֆրանչէսքոյ Ֆոսքարի յան-կարծական շարժմամբ մը յաղողած էր հանել մատանին, և զայն օդին մէջ բար-ձրացունելով ուժգին ձայնով մը ըսաւ.

— Վենետկեցի՛ք, կը գանգատիք թէ տարիքը սատեցուցած է ծերու մը ձեռքը. սակայն ձեր մէջէն շատերը գիտեն թէ նոյն այս ձեռքը քառասուն տարիէն աւելի սուր գործածած է Պետութեան պաշտպանու-թեան համար։ Հոս գտնուող իմ նախկին զինուորական ընկերներս թող խօսին և ըսեն, եթէ չեն մոռցած իրենց ծեր զօ-բավարը։

— Ոչ, ոչ, պատասխանեցին բազմա-թիւ ձայներ։

— Ուրեմն վստահութիւն ունեցէք ձեր տոժին վրայ, ըսաւ Ֆրանչէսքոյ Ֆոսքա-րի, և հաւատք՝ Նախախնամութեան վրայ, որ երբէք չէ դադրած հսկելու Պետու-թեան ապահովութեան։

— Այո՛, այո՛, պատասխանեցին նոյն ձայները։

Ցոժը շարունակեց.

— Ձեր ամենուն անուամբ, յանուն իմ շուրջս եղող ազնուականութեան, յանուն ինձի ունկնդրող ժողովրդեանս, յանուն Վենետկոյ, զոր ես կը ներկայացնեմ, յանուն Ս. Մարկոսի իւր պաշտպանին, ես Ֆրանչէսքոյ Ֆոսքարի, տոժ Վենետ-կոյ, այս տասնըութերորդ անգամ կ'ընծայեմ ահա ծովուն իմ տոժական մա-տանիս ի նշան հարսանեաց։

Ուրախութեան երկար աղաղակ մը ո-ղոտաց. բոլոր գլուխները բաց էին։ կոն-տոլաներուն վրայէն ձկնորսները և կոն-տոլավարներն իրենց բրդեայ գլխարկները կը տատանէին։ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի ձեռքի նշանով մը հասկցուց թէ տակա-ւին ըսելիքներ ունի։ Լռութիւնը իսկոյն վերադարձաւ։

— Ցանուն աւազանայն ըսաւ տոժը, կը պակուիմ ծովուն հետ, անշուշտ կ'ըմբռնէք խորհրդաւոր իմաստը. այսինքն վենետիկը այսօր այս ալեաց հետ, որոնք ձեր նաւերը կը տանին երկրիս հեռուներ-ը, կը կազմէ դարձեալ յոյժ սեղմ նիգա-կակցութիւն մը, որով Պերճապայծառ Հա-սարակապետութեան իշխանութիւնը պիտի տարածուի օր մը այն ամէն երկիրներուն վրայ՝ որոնց ափունքը կը թրջէ ծովը։ Այն ատեն նախատացեալ ժամանակները պիտի հանին և Ադրիականին թագուհին՝ պիտի ըլլայ թագուհի տիեզերաց։

Ուրախութեան աղաղակներն այնպիսի սաստկութեամբ վերսկան՝ որ գառան-ցանքի կը յանգէին։ Վենետկեան հայ-բնասիրութիւնը կը խօսէր տոժին բեր-նով, ազգային հպարտութիւնը գոհացումն ունեցած էր. և բոլոր այս խայտաղէտ բազմութեան մէջ չկար գրգռեակով ձկնորս մը կոնտոլայի մը բարձունքը ելած, որ ինք-զինքը գէթ աշխարհի տէր չկարծէր։

Ցոժը սպասեց որպէս զի ուրախութեան խանդը քիչ մը հանդարտի, յետոյ ցցուցց ժողովրդեան դքսական մատանին, իւր իշ-խանութեան նշանն, և զայն մատերուն մէջէն ձգեց։ Սակայն մատանին փոխա-նակ Ադրիականին երկնագոյն ալիքներուն մէջ անյայտ ըլլալու, ինկաւ նախ Պույիճ-դորոյի ոսկեզօծ կողերը զարդարող բազ-մաթիւ դրուագներէն միոյն վրայ և հոն-կլոր ցատկեց Քիմէոի մը վրայ, որուն ան-հոռնի կոնակը նաւուն կողէն դուրս կը ցցուէր։

digitised by A.R.A.R.@

Այս դէպքը աննկարագրելի յուզմունք մը յառաջ բերաւ։ Երբէք նմանօրինակ բան մը չէր պատահած։ Իրարու կը նայէին առանց համարձակելու իրենց միտքէն անցածները մէկմէկու հաղորդելու։ Ապահով այս գուշակութիւնը մինչև այն ժամանակ եղածներուն մէջ, ամենէն ձախորդն էր։ Տոմը ոչ թէ ծովուն հետ կը պակուի, այլ հրէշի մը հետ, որ անտարակոյս պիտի ուտէ լափէ Վենետիկը։

Ահ ու սարսափը ծայր աստիճանի էր ժողովրդեան մէջ Պուչինդորոյի վրայի ազնուական ուղևորներն իսկ խռոված էին. և անոնց մէջէն ոմանք բարկութեան նըշաններ կամ սպառնալեաց խօսքեր կ'ուղղէին տոմին հասցէին։

— Թէ որ չափազանց ծեր է իր բարձր պաշտամունքը կատարելու, կ'ըսէին երիտասարդագոյնները, իր հրաժարականը թող տայ։

Ծերագոյնները կը լռէին կամ երիտասարդաց զայրոյթը կը հանդարտեցընէին, որոնք բարկութեան անխոհեմ խօսքեր իրենց բերնէն դուրս կու տային։ Սակայն ընդհանուր ամէնքն ալ տժգոհ կ'երևէին Ֆրանչէսքոյ Ֆոսքարիի անճարակութեան վրայ։

Յանկարծ հսկայ կերպարանքով մէկը տեսնուեցաւ, որ իր նաւակը Պուչինդորոյին կը մօտեցընէր։ Հասնելով հոն, իր նաւակին թիավարելու նստարանին վրայ ամբողջ հասակովը շիտակ կայնեցաւ, ու Պուչինդորոյի կողին ծակերէն դուրս ելած բազմաթիւ թիերէն միոյն կառչեցաւ, և ոտքերու ու ձեռքերու օգնութեամբ՝ սկսաւ համարձակօրէն մագլցել նաւուն կողին երկայնութեամբ։

— Է՛հ, Ռիքարտոն է, Ռիալդոյի կոնտոլավարն, ըսաւ ձայն մը։

— Զուարթ Ռիքարտո՛ն. բարև, Ռիքարտոյ, կրկնեց ուրիշ մը։

— Այո՛, ես եմ, բարև տղաքներ, ըսաւ յաղթանդամ մարդը, որ հասնելով Քիմեռին, անոր կռնակին վրայ նստած էր անփութօրէն։

— Ի՞նչ պիտի ընես հոս, Ռիքարտոյ, ըսաւ նոյն անձն որ արդէն անգամ մը հարցմունք ուղղած էր կոնտոլավարին։

— Հիմայ պիտի տեսնէք։

Տոմին և Վենետկոյ ամբողջ ծերակուտին դիմաց ժողովրդեան այս երկու մարդոց մէջ եղած յանդուգն խօսակցութիւնը Պուչինդորոյի վրայ՝ շատերուն յօնքերը պռստել տուած էր արդէն։ Սակայն չարագոյնն եղաւ երբ կոնտոլավարը, զոր Ռիքարտոյ կը կոչէին, առաւ դքսական մատանին, որ իրեն մօտ Քիմէռին վրայ կը կենար, և զայն նետեց ծովուն մէջ, ուր ինկաւ առանց կաթիլ մը ջուր վեր հանելու։

— Կեցցե՛ս, Ռիքարտոյ, գոչեցին ժողովրդեան երկու հազար ձայներ։

Սակայն Պուչինդորոյի ուղևորները, ծովուն հարսանեաց մէջ Ռիքարտոյին մասնակցութեան մասին ժողովրդեան ցուցած խանդավառութեան ամենևին համամիտ չէին։ Անոնցմէ մին, միւսներէն աւելի անհամբեր, քաշեց սուրը և յարձակեցաւ նաւուն կամրջակին վրայ կոնտոլավարին հասնելու. այս անձը Մկրտիչ Մարղինէնկոյ զօրավարն էր։

— Լի՛րբ, գոչեց։

— Ի՞նչ կայ, տէր զօրավար, ըսաւ կոնտոլավարն առանց կորսնցունելու իր անփոյթ զուարթ կերպը։

— Աղէկ գիտեմ ես զքեզ պատժել, ըսաւ Մարղինէնկոյ, սուրը բարձրացունելով։

Սակայն Ֆրանչէսքոյ Ֆոսքարիի ձեռքն արգիլեց զինքը։

— Զօրավա՛ր, ըսաւ խստութեամբ տոմը, դուք կը մոռնաք թէ հոս ե՛ս միայն կը հրամայեմ։ Սուրը պատեանը դրէք, կը հրամայեմ ձեզ։

Զօրավարը դժկամակութեամբ հնազանդեցաւ. և տոմը դառնալով կոնտոլավարին ըսաւ.

— Ի՞նչ կը խնդրես, ո՛վ կոնտոլավար։

— Պերճապայծառ Տէր, ըսաւ Ռիքարտոն, ուզեցի օգնել ձեր հարսանեաց արարողութեան։

— Մեծ յանդգնութիւն է ըրածդ, ո-

digitised by A.R.A.R.@

րուն համար կրնաս պատժուիլ, դու այս բանս չե՞ս գիտեր։

— Անշուշտ գիտեմ, վսեմաշուք Տէր, և եթէ չունենայի ուրիշ նպատակ մը, պիտի չյանդգնէի մինչև հոս վեր ելլելով Ձեր Պերճափայլութիւնը խռովել։ Սակայն մեծ լուր մը ունիմ ձեզի հաղորդելու, որ կը շահագրգռէ ոչ միայն զձեզ, այլ և Պերճափայլ Հասարակապետութիւնը։

— Խօսէ՛, սակայն կարճ կապէ, ըսաւ տոժը։

— Ո՛հ, շատախօսութեան պէտք չունիմ միտքս բացատրելու։

Եւ Քիմեռին կռնակին վրայ ոտքի ելլելով.

— Պերճապայծառ Տէր, ըսաւ, ձեր հարսանիքը Ադրիականին հետ այս տարի ամուլ պիտի չըլլայ։

Ֆրանչէսքոյ Ֆոսքարի ժողովրդական կատակաբանութիւն մը համարեցաւ և իր թաւ յօնքերը պռստեց։ Սակայն նոյն հանդարտ ձայնով հարցուց։

— Ի՞նչ կ'ուզես ըսել, կոնտոլավա՛ր։

— Տոժ, ըսաւ Ռիքարտոյ, նայեցէք հո՛ն վարը սա ջրի մամռոտներուն ետին, ահա մանկիկ մը՝ զոր ծովը ձեզ կը խաւրէ։

Այսպէս խօսելու ատեն՝ կոնտոլավարը իր գլխարկը շարժելով կը ցուցընէր նաւէն քանի մը հարիւր գրկաչափ հեռու սակառ մը ջրին երեսը դրուած, իբր ալկիոնի բոյն մը ալիքներուն վրայ. այս սակառին մէջ մանկիկ մը կարծես կը քնանար։

Կոնտոլավար Ռիքարտոյին խոշոր ձայնը լսելի եղած էր շատ հեռուներ։ Անգամ մը որ ժողովրդեան ռամիկ դասակարգը հասկըցաւ թէ ի՛նչ բանի վրայ է խնդիրը, իրեն խօսակցութիւնը իսկոյն դադրեցուց, չար գուշակութիւնք անհետ եղան և այս խորհրդանշանը՝ հարաւայիններու երևակայութեամբ՝ իսկոյն իբր փոքր Մովսէս մը համարուեցաւ, զոր Նախախնամութիւնը կը խաւրէր Վենետիկ, իր տոժին ծովուն հետ ըրած զինակակցութեան իբր նշան։ Խորագոյն ապաւորութիւն մը գործեց այս՝ աւելորդապաշտ միտքերուն վրայ։ Բոլոր նաւակներն միանգամայն շարժեցան երթալու ազատելու հնաշխարհիկ կորուստը. սակայն տոժը շարժումով մը արգիլեց զանոնք.

— Ամէնքնիդ ալ տեղերնիդ կեցէք, ըսաւ. կոնտոլավար Ռիքարտոյին կ'իյնայ առնուլ մանկիկը՝ զոր ինքն յայտնեց։ Կոնտոլավա՛ր, աւելցուց տոժը դառնալով Ռիքարտոյին, գնա՛ ա՛ռ սակառն և բեր մեզի Պուչինթորոյի վրայ։

Հսկայն կրկնել չտուաւ հրամանը. ցատկեց խոր ջրին մէջ, և այս արտակարգ տեսարանին ազդած զարմանքը տակաւին չցնդած, Ռիքարտոյ կոնտոլավարը հասած էր արդէն սակառին, զոր իր դիմացէն հրելով բերաւ Պուչինթորոյի քով։

Հափշտակութիւնք ողջունեցին Ռիքարտոն՝ երբ սակառը յանձնեց տոժին, և տակաւին կը շարունակէին՝ երբ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի նշան ըրաւ ժողովրդեան թէ կ'ուզէ խօսիլ։ Հետաքրքրութիւնը կըրցաւ կէս մը լռութիւն ընել տալ։

— Մանուկը կենդանի է, ըսաւ տոժը։

— Կեցցէ՛, կեցցէ՛, գոչեց բազմութիւնը։

— Աղջիկ մ'է, աւելցուց տոժը, և քանի մը շաբաթուան կ'երևի։

— Ադրիականին աղջիկն, ըսաւ ձայն մը։

— Ադրիականին աղջիկը, կրկնեց բազմութիւնը, կեցցէ՛, կեցցէ՛։

— Corpo di Bacco! պոռաց Ռիքարտոն իր կորովի ձայնովը, Ադրիականին աղջիկը Վենետկոյ որբուհին պիտի ըլլայ։

— Այո՛, այո՛, ըսաւ ելեկտրացեալ բազմութիւնը։

— Այնպէս չէ՞, վսեմաշուք Տեարք, աւելցուց Ռիքարտոն՝ այս անգամ դառնալով ծերակուտականաց կողմը։

— Այո՛. ըսին ծերակուտականները միաձայն, թերևս զգացուած այս տարօրինակ պարագայէն, կամ լաւ ևս նախանձելով Ֆրանչէսքոյ Ֆոսքարիին ժողովրդականութեան վրայ, զոր դիպուածով մը ձեռք ձգած էր։

Ֆոսքարին այս անակնկալ յաղթանակին ուրախութենէն զգլխած, որուն շատոնց սովորութիւնը կորուսած էր, ըսաւ.

— Ժողովուրդ Վենետկոյ, ի՛նչ անուն կ'ուզէք դնել Ադրիականին աղջկանը։

digitised by A.R.A.R.@

— Վենէցիա՛. ըսաւ Ռիքարտոն, ինչպէս կոչուած է իր անդրանիկ քոյրը՝ Վենետիկը, կառուցուած եօթանասուն երկու կղզիներու վրայ։

— Այո՛, այո՛, Վենէցիա, պատասխանեց բազմութիւնը, գեղեցիկն Վենէցիա։

— Այնպէս ըլլայ, ըսաւ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի, և կը խոստանամ ձեզ հսկել այս Վենէցիայի վրայ նոյն այն սիրով և խնամքով, զորս ցուցի առաջնոյն, ոչ միայն իմ դքսութեանս տասնըութ տարիներուն մէջ, այլ և Պերճափայլ Հասարակապետութեան ծառայութիւնը ամբողջովին նուիրուած երկար կեանքիս մէջ։

Խառնիճաղանձը խելայեղ դարձեալ երկարօրէն ծափահարեց. վերջապէս Պուչինդրոյ ցիցերուն մէջէն դէպի Վենետիկ ճամբայ ելաւ. և եկաւ կեցաւ դարձեալ մեծափառութեամբ Բիամէդդայի դիմաց, հոն հանելու Ֆոսքարին և Վենետկոյ ամբողջ ազնուականութիւնը, որ կեղծ մեծարանօք առաջնորդեց թափորով մինչև Հակայից սանդուխը այս տոժը՝ որ ամէն օր դառնութեամբ կը լեցուներ, և զոր տասնըութ տարի վերջը վար պիտի առնէր։

Այս միջոցին կոնտոլաներէն և ժողովրդեան ստորին կարգին խեղճ նաւակներէն մեծագոյն մասը ուժով ուժով կը թիավարէին մեծ Ջրանցքէն (Canal grande) վեր, աճապարելով դէպի Ռիալդոյ։ Ցոնախմբութիւնը չէր թուեր վերջացած ամենուն համար. վասն զի բոլոր այդ խայտաբղէտ բազմութիւնն, լեցուած կոնտոլաներուն և նաւակներուն մէջ ընկղմելու ատենն, ուրախութեան աղաղակներ և զուարթ բացագանչութիւններ կ՝ընէին, որոնց մէջ անդադար այս բառերը կը լսուէին.

— Գասդելօղնե՛ր, Նիքոլօղնե՛ր, ըմբշամարտութիւն քաջ կոնտոլավարներու և Ֆիոճճիայի կորիճ ձկնորսներու։ Ըմբշամարտութի՛ւն, ըմբշամարտութի՛ւն։

Հ. Մ. Վ. Սաւանեան

Շարայարելի

ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՀՐԱՏ

Իր լուսանկարները. — Լիճեր, ծովեր, երկիրներ, ամպեր, ջրանցքներ, եղանակներ Հրատի մէջ — Կեանքի գոյութիւն. — Բրոֆ. Միխայէլին նոր վիրք և Բրոֆ. Նիւսբերին հակասական պատասխանը. — Բրոֆ. Սքիաբարելլիի վերջերս Հրատի վրայ կատարած ուսումնասիրութիւններն ու անոնց արդիւնքը. — Նշանաւոր բնակչ և տարբերութիւններու պատասխանը, Հրատի պարունակած մթնոլորտին վրայ.

Աստղաբաշխութիւնը՝ որ գիտութեանց ամենահինը և լուրջը կրնայ համարուիլ, քանի որ երկնքի առաջին վկայները, իր վրայ հիացողներ եղած են, զայն իրենց ուսման առարկայ ընելով, սակայն այդ գիտութիւնն չէ կրցած մինչև հիմայ հակառակ այնչափ Սրիաթարդիլիներու, Թիբոճի Պրայէ, Նիւսբրի, Գէբեր, Լեվերիէներու, լուծել Հրատի բնակչութեան մասին գոյացած խորհուրդը, իր լոյսը չէ կրցած, զայն շրջապատող թանձր մթնոլորտը ճեղքել ու ներս թափանցելով, զայն լուսաւորել մեր աչքերուն, և ասոր պատճառը շատ պարզ է ինչպէս որ վերջերս կարգ մը հրաշալի, հոգեբանական և ծածկագիտական հարցերուն ծագմամբ [1], ոմանք կուրօրէն հաւատացին, ոմանք թովմասառաքեալէն ալ աւելի անհաւատ տեսնելով հանդերձ ալ չհաւատացին, իսկ երրորդ մասմը, որ այս երկու ընդարձակ և հակասական, դաշտերու սահմանը կը կազմէր, ջանաց և պիտի ջանայ զանոնք մօտեցնելու։ Այսպէս ալ մեր ունեցած քիչ ծանօթութիւնները այս մոլորակին վրայ, գիտական երկար վիճաբանութեանց առիթ տուին թերթերուն, և սակայն Սքիաբարելլի, իտալացի հռչակաւոր աստղաբաշխը, հակառակ իր բազմաթիւ հակառակորդներուն, միշտ յաղթող հանդիսացաւ կռուի դաշտին մէջ, ներկայացնելով իր անհաւատ մրցակիցներուն, նոյն իսկ Հրա-

1. Տես, Տօք. Ֆ. Թոփճեանի, հոգերանական հարցերը Արևելքի N. 6800, 6802, 6806, 6809, 1816, 6824 և 6827.

digitised by A.R.A.R.@